ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N° ՀՀ ԱՆ ԳՀԾ 2016-9

Քաղաք Երևան «02» մարտի 2016թ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, այսուհետև՝ «Պատվիրատու», ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը,** այսուհետև՝ «Կատարող», ի դեմս տնօրեն **Արամ Գահնապետյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել **փորձաքննությունների կատարման ծառայություններ՝ դատական փորձաքննությունների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով** և սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել փորձագետի կողմից՝ սույն պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարված եզրակացությունն ու վճարել փորձաքննության կատարման ծառայությունների գինը:

1.2. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության կատարումը հանձնարարում և փորձաքննության կատարման արդյունքում կազմված եզրակացությունն ընդունում է տվյալ փորձաքննության անցկացումը նախաձեռնողը՝ դատարանը կամ քրեական հետապնդման մարմինը (դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը), որոնք ի պաշտոնե ռանդիսանում են Պատվիրատուի ներկայացուցիչը:

1.3. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության բովանդակությունը որոշվում է փորձաքննությունը նախաձեռնողի՝ տվյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կողմերի պայմանագրի կատարման պայման է հանդիսանում **ՀՀ կառավարության 18.02.2016թ N 140-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:**

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2(երկու)** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **2(երկու)** (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10(տաս) աշխատանքօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **235 918 000 (Երկու հարյուր երեսունհինգ միլիոն ինը հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ:**

4.2 Ծառայությունների մատուցման գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարներ, ինչպես նաև Կատարողի կողմից սույն պայմանագրով իրականացվող փորձաքննությունների համար իրականացված ծախսերը: Փորձաքննությունների, ըստ տեսակների, կատարման ծառայությունների գինը որոշվում է ըստ սույն պայմանագրի հավելված N 1-ի միավոր գների:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Ծառայությունը մատուցվում է 0 (զրո) տոկոս շահույթով:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի

պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30.12.2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ունի հետադարձ ուժ, տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ից (ներառյալ) սկսած Պատվիրատուի և Կատարողի միջև սույն պայմանագրով ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ, քան 30.12.2016թ. ներառյալ:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ	«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
Ք. Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Արշակունյաց 23,
ՀՀ ֆինանսների նախարարության **կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն**	Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 900011194181	Հ/Հ 1930000762190100
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02512069
	հեռ.՝ 585950
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N° 1

«02» մարտի 2016թ. կնքված

N° ՀՀ ԱՆ ԳՀԾ 2016-9 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ)

Գնման առարկայի անվանումը	Փորձաքննության տեսակը	Փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամածախսը (ժամ) *	Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը, (ՀՀդրամ)**	Միավորի նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)	Քանակը (հատ)	Ընդամենը նախահաշվային արժեքը (հազ. ՀՀ դրամ)
1.Փորձագիտական ծառայություններ	Ձեռագրաբանական	45	560	25200	550	13860,0
	Փաստաթղթաբանական, այդ թվում՝	60	560	33600	400	13440,0
	- փաստաթղթի պատրաստման եղանակի և վավերապայմանների	60	560	33600	308	10348,8
	- փաստաթղթի նյութի	60	560	33600	92	3091,2
	Հետքաբանական, այդ թվում՝	45	560	25200	1000	25200,0
	- մարդու կողմից թողնված հետքերի	45	560	25200	85	2142,0
	- առարկաների, գործիքների հետքերի	45	560	25200	434	10936,8
	- տրանսպորտային միջոցների հետքերի	45	560	25200	430	10836,0
	- սառը զենքի	45	560	25200	51	1285,2
	Ֆոտոտեխնիկական	90	560	50400	8	403,2
	Դիմանկարային	90	560	50400	70	3528,0
	Ձգաբանական, այդ թվում՝	60	560	33600	580	19488,0
	- հրազենի և զինամթերքի	60	560	33600	309	10382,4
	- կրակոցի հետքերի և արգասիքների	60	560	33600	271	9105,6
	Պայթյունատեխնիկական, այդ թվում՝	90	560	50400	100	5040,0
	- պայթուցիկ սարքավորումների և զինամթերքի	90	560	50400	55	2772,0

- պայթյունի հետքերի և արգասիքների	90	560	50400	45	2268,0
Նյութագիտական, այդ թվում՝	60	560	33600	1216	40857,6
- լաքաներկերի և ծածկույթների	60	560	33600	386	12969,6
- նավթամթերքների և քսայուղերի	60	560	33600	135	4536,0
- սպիրտ պարունակող հեղուկների	60	560	33600	153	5140,8
- ապակու, ապակենման նյութերի, սիլիկատային նյութերի	60	560	33600	11	369,6
- միներալների, բնական ու թանկարժեք քարերի	60	560	33600	150	5040,0
-պլաստմասսաների, ռետինի և այլ պոլիմերային նյութերի	60	560	33600	34	1142,4
-մետաղների և համաձուլվածքների	60	560	33600	192	6451,2
-այլ նյութերի	60	560	33600	155	5208,0
Կենսաբանական, այդ թվում՝	60	560	33600	700	23520,0
-բուսական ծագման օբյեկտների	60	560	33600	232	7795,2
-կենդանական ծագման օբյեկտների	60	560	33600	13	436,8
-թմրամիջոցների և հոգեմետ դեղամիջոցների	60	560	33600	335	11256,0
-մանրաթելերի ու գործվածքների	60	560	33600	90	3024,0
-հողագիտական	60	560	33600	30	1008,0
Սննդային	60	560	33600	4	134,4
Տեսաձայնագրառման, այդ թվում՝	120	560	67200	280	18816,0
-ձայնի և հնչած խոսքի	120	560	67200	105	7056,0
-ձայնագրվածքի ձայնային միջավայրի, պայմանների, միջոցների, նյութի և հետքերի	120	560	67200	104	6988,8
-տեսագրվածքի պատկերի, պայմանների, միջոցների, նյութի և հետքերի	120	560	67200	71	4771,2
Հրդեհատեխնիկական, այդ թվում՝	90	560	50400	140	7056,0
- հրդեհատեխնիկական	90	560	50400	115	5796,0
- էլեկտրատեխնիկական	90	560	50400	25	1260,0

Շինարարատեխնիկական, այդ թվում՝	60	560	33600	180	6048,0
-շինարարատեխնիկական	60	560	33600	156	5241,6
-անշարժ գույքի գնահատման	60	560	33600	24	806,4
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	30	560	16800	400	6720,0
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	90	560	50400	216	10882,0
Տրանսպորտային հետքաբանական	90	560	50400	80	4032,0
Տնտեսագիտական, այդ թվում՝	180	560	100800	186	18748,8
-հաշվապահական	180	560	100800	160	16128,0
-ֆինանսատնտեսագիտական	180	560	100800	26	2620,8
Ապրանքագիտական, այդ թվում՝	30	560	16800	910	15288,0
-ապրանքի գնահատման	30	560	16800	460	7728,0
-գույքային վնասի չափի որոշման	30	560	16800	450	7560,0
Համակարգչային-տեխնիկական	150	560	84000	34	2856,0
Ընդամենը				7054	235918,0
Ծառայության մատուցման ժամկետը					
Սկիզբը				Ավարտը	
2016 թվականի հունվարի 1(ներառյալ)				**30.12.2016թ.**	

*-Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2006 թվականի փետրվարի 2-ի N 79-Ն որոշմամբ հաստատել է յուրաքանչյուր տեսակի փորձաքննության ծառայության մատուցման նորմատիվային ժամածախսերը

**-Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 140-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանվել է փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը՝ 560 դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Արշակունյաց 23,
Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 1930000762190100
ՀՎՀՀ 02512069
հեռ.՝ 585950

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2

«02» մարտի 2016թ. կնքված

N° ՀՀ ԱՆ ԳՀԾ 2016-9 պայմանագրի

No ՀՀ ԱՆ ԳՀԾ 2016-9 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Փորձագիտական ծառայություններ	-	-	47183600	106163100	106163100	106163100	165142600	165142600	165142600	235918000	235918000	235918000	235918000 (Երկու հարյուր երեսունհինգ միլիոն ինը հարյուր տասնութ) ՀՀ դրամ

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արդարադատության նախարարության
աշխատակազմ
Ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության փորձագիտական
կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Արշակունյաց 23,
Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 1930000762190100
ՀՎՀՀ 02512069
հեռ.՝ 585950

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<<02>> մարտի 2016 թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ԳԶԾ 2016-9» պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
հասցե 0023, ք.Երևան , Արշակունյաց 23	հասցե ք.Երևան, Հալաբյան 41ա
հհ <Կոնվերս Բանկ> ՓԲԸ	հհ ՀՀ ֆին. նախարարություն
Հ/Հ 1930000762190100	Հ/Հ 900011194181
հվհհ 02512069	հվհհ 02506264

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Փորձաքննությունների կատարման ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի, և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Գահնապետյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2015թ. կազմված [illegible] N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները.

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
________________	________________
ստորագրություն	ստորագրություն
Ա. Գահնապետյան	________________
Կ.Տ ազգանուն, անուն	Կ.Տ ազգանուն, անուն

Հավելված 3.1
<<02>> մարտի 2016 թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ԳՀԾ 2016-9» պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ կազմակերպության Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ----------« » -ին կնքված «ՀՀ ԱՆ ԳՀԾ 2016-9» պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը** (փաստացի)	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն